ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 28

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի 2008թ. մարտի 28-ին ժամը 15:00-ին ՀՀ Կառավարության նիստերի դահլիճում կայացած հերթական նիստի

Նիստը նախագահում էր.

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Հովիկ Աբրահամյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Վարդան Խաչատրյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար
Անդրանիկ Մանուկյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Սամվել Ավետիսյանը	ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար, ՀՀ գյուղատնտեսության նախարար, Կառավարման խորհրդի անդամ Դավիթ Լոքյանի լիազոր ներկայացուցիչ
Արայիկ Հովհաննիսյանը	«Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Վանիկ Սողոմոնյանը	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ-ի նախագահ
Աշոտ Ոսկանյանը	«Ագրոզարգացում» ՀԿ-ի նախագահ
Հրաչիկ Ջավադյանը	Կիրառական հետազոտությունների և ագրոբիզնեսի հիմնադրամի գործադիր տնօրեն
Կարեն Նազարյանը	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղանի գործադիր տնօրեն

Կառավարման խորհրդի դիտորդներ.

Կարինե Դանիելյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ, «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Ալեքս Ռասինը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն

Նիստից բացակայում էին.

Վահրամ Ներսիսյանցը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի փոխնախագահ, ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական
Դավիթ Լոքյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար

Նիստին հրավիրված էին.

Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
Դավիթ Ավետիսյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Կառավարման Խորհրդի քարտուղար
Լևոն Մարտիրոսյանը	ՀՀ Վարչապետի օգնական
Սիմոն Ղոնաղչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Մերի Հարությունյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
Հովհաննես Սահակյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

Նիստը բացեց «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը:

Նիստի օրակարգում ներկայացված էին հետևյալ հարցերը.

1. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի Պայմանագիր No RRRP-CW-03/2007 (Լոտ 1, Լոտ 2, Լոտ 3, Լոտ 4, Լոտ 5 և Լոտ 6-ում ընդգրկված ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքներ) մրցույթների արդյունքների քննարկում և հաստատում:
2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի «Ոռոգման կառավարման կազմակերպությունների կարողությունների ամրապնդում» WM/IS-06/005 խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մրցույթի վերաբերյալ ՀՄԿ-ի

առարկության նամակի և առաջարկությունների քննարկում և դիրքորոշման ներկայացում:

3. Այլ հարցեր.

ա/ «Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում», IA-08/001խորհրդատվական ծառայության մրցույթի՝ կազմակերպությունների նախաորակավորումն անցկացնելու հարցի քննարկում և հաստատում,

բ/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ -Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի կողմից 2008թ. փետրվարի 7-ին և մարտի 12-ին հաստատված գնումների պլանում տեղ գտած փոփոխությունների քննարկում և հաստատում:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը: 1-ին հարցի վերաբերյալ Անդրանիկ Մանուկյանը հայտնեց, որ 1-ին փաթեթում ընդգրկված ճանապարհների շինարարության 6 Լոտերում հաղթող ճանաչված ընկերությունները հանդիսանում են Հայաստանի Հանրապետությունում իրականացվող ամենամեծ շինարարական մրցույթների հաղթողները և ունեն բարձր որակավորում: Պարոն Մանուկյանն իր վստահությունը հայտնեց այն հարցում, որ այդ ընկերությունները բարձր որակով և պատասխանատվությամբ կիրականացնեն կնքվելիք պայմանագրերով նախատեսված աշխատանքները:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը խնդրեց պարզաբանել, թե ինչու՞ են ընկերությունները ներկայանում համատեղ ձեռնարկություններ կազմելով:

Անդրանիկ Մանուկյանը պարզաբանեց, որ նախատեսված մրցութային պայմանները բավականին խիստ էին և դրանց համապատասխանելու նպատակներից ելնելով, հավանաբար, ընկերությունները հանդես են եկել համատեղ ձեռնարկություններով: Բացի այդ այս կարգով միավորվում են նաև ընկերությունների ակտիվները և համապատասխան սարքավորումները:

Պարզաբանումից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի Պայմանագիր No RRRP-CW-03/2007 (Լոտ 1, Լոտ 2, Լոտ 3, Լոտ 4, Լոտ 5 և Լոտ 6-ում ընդգրկված ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքներ) մրցույթների արդյունքները:

Օրակարգի 2-րդ հարցի ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը: Հարցի քննարկման ընթացքում Արա Հովսեփյանը հայտնեց, որ տվյալ հարցը քննարկվել է կառավարման խորհրդի նախորդ նիստում և որոշում է ընդունվել ստանալ ՀՄԿ-ի վերջնական դիրքորոշումը հարցի շուրջ և անհրաժեշտության դեպքում հարցը ներկայացնել կառավարման խորհդի քննարկմանը: Այս ընթացքում ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը շարունակել է բանակցություններ վարել ՀՄԿ-ի հետ, այդ թվում կազմակերպել է համատեղ հանդիպում ՀՀ գյուղատնտեսության նախարար Դավիթ Լոքյանի հետ:

Բանակցությունների արդյունքում ՀՄԿ-ն համաձայնվել է տրամադրել իր հավանությունը «Ոռոգման կառավարման կազմակերպությունների կարողությունների ամրապնդում» խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մրցույթի համակցված տեխնիկա-ֆինանսական գնահատման արդյունքներին ՝ ելնելով ծրագրի առավել արդյունավետ և ամբողջական իրականացման նպատակներից:

Մինչ պայմանագրի ստորագրումը, այնուամենայնիվ, պարոն Հ. Ջավադյանը պետք է հրաժարվի ՀՄՀ-Հայաստանի Կառավարման խորհրդում իր անդամությունից, քանի որ պարոն Ջավադյանի կողմից ԿՀԱՀ անունից նշված պայմանագրի ստորագրման դեպքում ՀՄԿ-ն բացառություն չի անի առկա շահերի բախման համար:

ՀՀ Վարչապետը դիմեց պարոն Ջավադյանին՝ ներկայացնելու իր դիրքորոշումն առկա իրավիճակի վերաբերյալ:

Հրաչիկ Ջավադյանը նշեց, որ տվյալ հարցը բավականին երկար ժամանակ է քննարկվում կառավարման խորհրդում և հայտնեց իր շնորհակալությունը, որ ի վերջո որոշումն ընդունվել է ելնելով ծրագրի շահերից:
Նա հայտնեց, որ հանդիպում է ունեցել նաև ՀՄԿ Հայաստանյան գրասենյակի տնօրեն Ալեքս Ռասինի հետ, որի ընթացքում քննարկվել է առկա խնդիրը:

Պարոն Ջավադյանը հայտարարեց, որ ելնելով ծրագրի արդյունավետ իրականացման նկատառումներից և հաշվի առնելով առկա շահերի բախումը, ինքը դուրս է գալիս ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի կազմից:

Հ. Ջավադյանն իր շնորհակալությունը հայտնեց բոլոր այն հասարակական կազմակերպություններին, որոնք երկու տարի անընդմեջ իրեն ընտրում էին որպես ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի շահառուների խորհրդի անդամ, ինչպես նաև իր շնորհակալությունն ուղղեց ՀՀ Վարչապետին և կառավարման խորհրդի անդամներին՝ համատեղ արդյունավետ աշխատանքի համար: Պարոն Ջավադյանն ավելացրեց նաև, որ կառավարման խորհրդի կազմից դուրս գալուց հետո ևս իր ամբողջ ներուժի չափով շարունակելու է աշխատել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության և ծրագրի արդյունավետ իրականացման համար

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը հատնեց, որ կարծում է, որ պարոն Ջավադյանը ճիշտ որոշում է կայացրել: Միաժամանակ անհրաժեշտ է համարում կառավարման խորհրդի անդամությունից հրաժարվելու մասին նաև իր գրավոր նամակի ներկայացումը, որպեսզի հնարավոր լինի նոր անդամի ընտրություն սկսել, ավելացնելով, որ կառավարման խորհրդից պարոն Ջավադյանի դուրս գալը ամենևին էլ չի նշանակում համատեղ գործունեության դադարեցում:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել պարոն Ջավադյանի ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի անդամությունից դուրս գալու հայտարարությունը:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ա/ կետի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում», IA-08/001խորհրդատվական ծառայության մրցույթի՝ կազմակերպությունների նախաորակավորումն անցկացնելու հարցը:

բ/ կետի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ -Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի կողմից 2008թ. փետրվարի 7-ին և մարտի 12-ին հաստատված գնումների պլանում տեղ գտած փոփոխությունները:

Անդրանիկ Մանուկյանը դիմեց Արա Հովսեփյանին պարզաբանելու պահպանվելու են արդյոք գյուղական ճանապարհաշինությանը Համաձայնագրով հատկացված 67 մլն ԱՄՆ դոլար գումարն այն պարագայում, երբ 1 փաթեթում ընդգրկված ճանապարհների շինարարության իրականացման համար կնքվելիք պայմանագրերի ընդհանուր մոտավոր գումարը կազմում է 56 մլն ԱՄՆ դոլար:

Արա Հովսեփյանը հաստատեց, որ Համաձայնագրով հաստատված գումարները չեն կրճատվելու:

Կարինե Դանիելյանը հայտնեց, որ ՀՄՀ-Հայաստան ծրագիրը նախատեսում է նաև քաղաքական և բնապահպանական գործոն: Սակայն ներկայումս ՀՀ-ում այնպիսի դեպքեր են գրանցվում, երբ իրականցվում են ապօրինի գործողություններ և պետությունն ու հասարակությունը անիրազեկ են մնում դրանից, օրինակ՝ Արարատյան դաշտավայրում իրականացվում է Կարմիր գրքում գրանցված թռչունների սպանդ, այսպես կոչված «սաֆարի բիզնես», որը հիմա փորձ է արվում դուրս բերել իրավական դաշտ:

ՀՀ Վարչապետը խնդրեց պարզաբանել, թե արդյոք այդ սպանդն իրականացնող ընկերությունն ունի ՀՀ Կառավարության համապատասխան մարմինների կողմից տրված որսի թույլտվություն:

Տիկին Դանիելյանը պարզաբանեց, որ այդպիսի թույլտվություն տրված չէ, այդ դեպքի բացահայտումը կատարվել է լրիվ պատահական, սակայն բացահայտումից հետո դրան առնչվող տեղեկատվությունը շատ մեծ արագությամբ շրջանառվել է և ներկայումս միջոցառումներ են ձեռնարկվում դրա դադարեցման ուղղությամբ:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը հանձնարարեց Հովիկ Աբրահամյանին՝ պարզելու այդ տեղեկությունների արժանահավատությունը, քանի որ ներկայացված փաստերը բավականին լուրջ կասկածների տեղիք են տալիս: Միաժամանակ ՀՀ Վարչապետն ավելացրեց, որ կձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ համատեղ միջոցառումները ապօրինի գործողությունները կասեցնելու ուղղությամբ եթե այդպիսիք բացահայտվեն:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱՋԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստը արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյան